

**Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտությամբ  
0916.01.01.5 «Դեղագործ» որակավորմամբ մասնագետի մասնագիտական  
պարտականություններն են.**

- 1) որոշի դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահանջարկը,
- 2) ձևակերպի դեղատան տեսականու ապրանքատեսակների պահանջագրերը՝ մատակարարներին,
- 3) մատակարարներից ընդունի դեղերը, բժշկական նշանակության առարկաները, հարդեղագործական ապրանքները և ստուգի դրանց փաթեթավորման ամբողջականությունը,
- 4) պահպանի դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները,
- 5) օգտվի պաշտոնական տեղեկատու աղբյուրներից, դեղի ներդիր-թերթիկից,
- 6) տարբերակի մարդու օրգանիզմի վրա դեղերի տարբեր դեղաբանական խմբերի ազդեցությունները,
- 7) դասավորի դեղերը ըստ դեղաբանական խմբերի, պահպանման և մերչենդայզինգի կանոնների,
- 8) սպառողներին տրամադրի տեղեկատվախորհրդատվական ծառայություն՝ դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ձևի, պահպանման կանոնների և այլնի վերաբերյալ,
- 9) կատարի բացակայող ԱԴՏ (առանց դեղատոմսի տրվող, OTC- Over the count) դեղերի հոմանիշային փոխարինում,
- 10) ընդունի դեղատոմսեր, ստուգի բաղադրատարրերի համատեղելիությունը և դեղատոմսի ձևակերպման ճշտությունը,
- 11) պատրաստի դեղատնային պայմաններում տարբեր դեղաձևեր (կարծր, հեղուկ, փափուկ),
- 12) փաթեթավորի և ձևավորի պատրաստված դեղերը,
- 13) բաց թողնի դեղատանը պատրաստված կամ գործարանային արտադրության դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները,
- 14) սպառողների հետ իրականացնի հետադարձ կապ, գրանցի և հաղորդի տեղեկություն՝ դեղերի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ,
- 15) ձևակերպի մուտքային և ելքային օրդերները,
- 16) կատարի ապրանքանյութական արժեքների հաշվառում և գույքագրում,
- 17) կատարի դեղատան և դրա ստորաբաժանումների գործունեության տնտեսագիտական վերլուծություն,
- 18) պահպանի դեղագործական էթիկայի և դեոնթոլոգիայի հիմունքները,
- 19) կանխարգելի մասնագիտական հիվանդությունները,
- 20) ցուցաբերի առաջին բուժօգնություն,
- 21) պահպանի սանիտարական նորմերի, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության պահանջները: